

Այցելություն Կոտայքի մարզային գրադարան

Նոյեմբերի 22-ին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները այցելեցին Կոտայքի մարզային գրադարան, քաղաք Հրազդան՝ գրականության նվիրատվության նպատակով:

Գրադարանի աշխատակիցները տեղում ծանոթացան գրադարանի աշխատանքներին ու շենքային գերազանց պայմաններին: Գրադարանում գործում էր նաև տիկնիկային թատրոն, իսկ աշխատակիցները պատրաստվումն էին առաջին ներկայացմանը:

Հայաստանի ազգային գրադարանի Գրքափոխանակության հավաքածուից Կոտայքի մարզային և համայնքային գրադարաններին նվիրաբերվեց 155 միավոր և պետական պատվերով ու պետական աջակցությամբ տպագրված 554 միավոր գրականություն :





